Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:

Լ. Ժ. Կ. ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

891.981-192

A II 39248

# 12 ՅԵՐԳ ԿՈԼԽՈԶՆԻԿԻՆ

Կազմեցին

Մ. ՄԻՐԶՈՅԱՆ յեվ Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏ 1935 ՅԵՐԵՎԱՆ

Երևան, Պետհրատի տպարան. Սրբ. Ս· Փարսադանյան

Գլավլիտ 240, պատվ. 813 տիրաժ 2000

## 1. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

*Ելի՛ր, ում կյանքը անիծել է,*
*Ով ճորտ է, մերկ է և անտուն.*
*Արդեն փայլում են մեր սրտերը,*
*Արդեն կռվի յենք մենք ձգտում։*
*Այս հին աշխարհը կը քանդենք մենք*
*Մինչև հիմքերը — և հետո*
*Մեր նոր աշխարհը կ'շինենք մենք.*
*Ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ.*

*Սա յե վերջին կռիվը և պայքարը մեր մեծ*
*Ինտերնացիոնալը աշխարհը կփրկի։*

*Վոչ վոք չի տա մեր փրկությունը,*
*Վոչ խենթ հերոսը, վոչ արքան.*
*Մենք պետք է մեր ազատությունը*
*Կռենք ձեռքով մեր սեփական։*
*Վորպեսզի շուտ փշրենք մեր լուծը*
*Յեվ հետ խլենք վողջ հողը մեր.*
*Փչենք մուրճերը, տանք մեր ուժը*
*Քանի յերկաթը տաք է դեռ։*
*Սա յե վերջին կռիվը և պայքարը մեր մեծ,*
*Ինտերնացիոնալը աշխարհը կը փրկի։*

*Լոկ մենք ճորտերս ու բանվորներս.*
*Ունենք անխախտ մի իրավունք,*
*Ասենք վոր հողը մերն է, մերն է,*

Կորչի հարուստը թող տզրուկ։
Եվ յերբ պայթի մեծ փոթորիկը
Եվ կուշտ շները չքանան
Նորից յերկիրը և յերկինքը
Մերն են ու մերը կը մնան։

Սա յե վերջին կռիվը և պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը աշխարհը կը փրկի։

Խոսք՝ Եոժեն Պոտ'յե,
Երաժշտ.— Պիյեր Դեգեյտերի
Թարգմ.—Եղիշե Չարենցի

---

## 2. ԱՆՎԱԽ ԸՆԿԵՐ

Անվախ ընկեր դիմենք չար, չար․
Կռվում հաղթող ամրանանք․
Ազատության մեհ ճանապարհ՝
Կրծքով հարթենք մեզ համար։

Մեր դրոշը՝ ազատություն․
Մեր մեծ ձեռքն՝ աշխատանք․
Աշխատանքի ազատություն
Թող լինի մեր դավանանք։

Շղթայակապ շատ տանջվեցինք․
Ցավ շատ զրկանք կրեցինք․
Դաժան օրերն ահա անցան
Մոտ է ժամը հատուցման։

Ժամն է հասել մեր մեծ դատի․
Դեպի պայքար, դեպի մարտ․
Չենք վախեցել ու չենք վախի
Մութ ուժերից ըերա ամարդ։

Թարգմ․՝ Ալազան

## 3. ՎԱՐՇԱՎՅԱՆԿԱ

*Բուքն է դաժան, մոլեգին մեր դեմ շաչում,*
*Սև ու խավար ուժերն են մեզ ճնշում.*
*Մենք դեմ յելանք վոսոխին մեծ պայքարում*
*Մեզ դեռ անհայտ վիճակներ են սպասում։*

*Բայց մենք պի՛տի հաղթենք ու անվախ պարզենք*
*Թագմի ալ դրոշը բանվորի ազատ*
*Դրոշը համայն մարդկության մեծ պայքարի*
*Հանուն բանվորի ազատ նոր կյանքի։*

*Թարգմ. Միք. Միրզայանի*

## 4. ՏՐԱԿՏՈՐԻ ՅԵՐԳԸ

*Անուշ անուշ հովն է խաղում թավիշ արտերում,*
*Կոլխոզնիկի յերգն է հնչում մեր ծով արտերում:*

*Էն տրակտորն է կանգնել հպարտ ժպտում արևին,*
*Հերկում է նա հողը պարարտ, գրկում արևին:*

*Ու հրճվանքից սիրտն է թնդում, ջահել են ուղին,*
*Բատրակ է նա կյանք է կերտում, կյանքը նոր գյուղի:*

*Խոսք՝ Վ. Աղայանի*
*Յերաժշտ.՝ Սա. Դեմուրյանի*

---

## 5. ԿՈԼԽՈԶ ԱՂՋԻԿ

*Անուշ ժպտաց արփին նարինջ արտերին հասուն,*
*Բրիգադիր ես կոլխոզ աղջիկ, գործում սիրասուն.*
*Հավաքել ես կոլխոզ կանանց եդ քո բրիգադում,*
*Ու գործում ես խինդով անանց բամբակի արտում:*

*Ուժը լարած յեռանդ առած ու սերը սրտում*
*Յարիդ մրցման կանչով տարված հաղթող ես խնդուն.*
*Յերգը յերգին, ձեռքը ձեռքին արտերում հասուն,*
*Հա դիզում ես բերքը բերքին, գործում սիրասուն:*

*Պայքարում ես եդ քու ուժով տոկուն ու համառ,*
*Կոլխոզ արտը բամբակի ծով Փաբրիկի համար.*
*Հավաքել ես կոլխոզ կանանց եդ քո բրիգադում,*
*Ու գործում ես խինդով անանց բամբակի արտում:*

*Խոսք՝ Ա. Մուրվալյանի*
*Յերաժշտ.՝ Մ. Մազմանյանի*

## 6. ՄԵՐ ԱՐՏԵՐՈՒՄ

Մեր արտերում, մեր արտերում,
Հիմա ինչքան կյանք է յեռում,
Մեր արտերում վոսկե ծփան
Կալեկոտ՝ նոր թափին է յեռում:

Բոլշևիկյան հասուն արտում,
Հղիացած հասկն է յեռում,
Կուլակի դեմ այս պայքարում
Միլիոնների կամքն է յեռում:

Մեր արտերում կոլխոզական,
Թշնամու դեմ մարտ է յեռում,
Ուր կոլխոզնիկ հարվածույնի
Ձեռքն ու ենտուզիազմն է յեռում:

Խոսք՝ Ն. Հարությունյանի
Յերաժշտ.՝ Միք. Միրզայանի

## 7. ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ

*Սարերով ու լայն դաշտերով սլանում է դիվիզիան,*
*Վոր գրավի նա ծովափերը, հետ քշի սպիտակ բանդան։*

*Ներկվեցին մեր դրոշակները վերքերից բոսոր գույնով,*
*Արշավում է եսկադրոնը պարտիզան կտրիճներով։*

*Միշտ ապրում է նրանց համբավը և կապրի դեռ շատ դարեր,*
*Պարտիզան մեր ջոկատները գրավեցին շատ քաղաքներ։*

*Ջարդ տվին ատամաններին, դահիճ զորավարներին,*
*Հաղթարշավն ավարտեցին խաղաղ ովկիանի ափին.*

*Թարգմ. Մ. Միրզայանի*
*Յերգ՝ Ատուրովի*

## 8. ԱՐԵՎՆ ՅԵԼԱՎ

Արևն ելավ՝ դեմի սարեն
Դեմի սարեն, սուր կատարեն
Նոր շենքերին տվավ բարև, Հազար բարև,
Հազար բարև, հազար արև:

Տե՛ս, պատերը բոյ են առել,
Յեվ արևը խաղում այնտեղ:

Պայծառ մեր արևի պես,
Արևի պես, բարևի պես,
Մեր շինարար քարերի պես,
Յերկրի բարձր սարերի պես:

Հին պատերը մեկ մեկ քանդենք,
Թող արևը խաղա այնտեղ:

Արևը մայր մտավ արդեն,
Թափեց կարմիր, կարմիր վարդեր,
Կարմիր վարդեր պես պես ներկով
Կերթանք դեպ տուն, յերթանք յերգով

Նոր պատերը վո՞նց վոր խոսուն,
Լուսնյակի տակ ասում խոսում:

Խոսք. Գ. Մահարու
Յերաժշտ. Ռոմանոս Մելիքյանի

---

## 9. ՅԵՍ ՆՈՒՌ ԵՄ

Յես նուռ եմ, սիրով հուր եմ,
Ջահել տղին մամուռ եմ,
Արաղի պէս լափ կտամ,
Սեր ու սովդա կխառնեմ:

Այ տղա, հանդ ես գնում,
Կոլլեկտիվ արտ ես գնում,
Կեպին թեքել ես ճակատիդ,
Ընպես հպարտ ես գնում:

Դու կոլխոզնիկ ես դառել,
Կուլակին քար ես դառել,
Կոլլեկտիվիդ ուժիցը
Գյուղի մեջ սար ես դառել:

Համ խելոք ես համ տոլ ես,
Մի ակտիվ կոմսոմոլ ես,
Կոլլեկտիվդ չեն մնա,
Սիրով ու սուփրով բոլ ես:

Խոսք՝ Ա. Տարոնցու
Երաժշտ.՝ Ռոմանոս Մելիքյանի

---

## 10. ԶՈՐԱԳԵՍ

Տես վերջին տուրքինն ահա,
Ձորագետն ավարտվեց
Ու բանվորությունն ահա
Պայքարով հաղթանակեց։

Ջան, ջան լե լե լե լե
Պայքարով հաղթանակեց։

Մեքենաներ շատ արագ,
Տես գործում են հա գործում.
Բանվորական բանակը
Ձորագետն է կառուցում։

Ջան, ջան լե լե լե լե
Ձորագետն է կառուցում։

Խոսք և երգ՝ Դ. ՂԱԶԱՐՅԱՆԻ

---

## 11. ԲԱՆԱԿԸ ԿԱՐՄԻՐ

Բանակը կարմիր կանգնած է հսկա
Մեր խորհրդային դիրքերի վրա
Նա հավատարիմ բանվորի գործին,
Չի գիջի յերբեք թշնամու փորձին։

Ուժգին և ազդու հարվածը նրա,
Ամեն մի բուրժուայ թող լավ իմանա,
Որ ինչքան անգամ մեր սահմանը գա
Բանակը կարմիր կանգնած է զգաստ։

Նա կուռ շարքերով մարտի դուրս կգա
Ու չար թշնամուն հարվածներ կտա.
Միշտ հավատարիմ բանվորի գործին,
Չի գիջի յերբեք թշնամու փորձին։

Խոսք՝ Հ. Մուրադյանի
Յերաժշտ. Միք. Միրզայանի

## 12 ՋԱՆ ԱՐՏԱՎԱՐ

Արտ ես յելնում դու մութ լուսին,
Ջան արտավար, սիրուն տղա.
Նստած տրակտորի ուսին—
Վար ես անում, սիրուն տղա:

Ակոսներ ես շարում արտում,
Իմ կոլխոզնիկ, ջան արտավար,
Հողի կուրծքն ես ճեղքում, քանդում,
Մեր կոլխոզի լավ արտավար:

Վառվող ջահը կապած սիրով
Տրակտորիդ լույս ճակատին,
Դու բանում ես ուշ գիշերով—
Ով չի սիրի քեզ պես տղին:

Ուր քրտինքն է կաթ-կաթ վազում.
Քո ճակատից, ջան արտավար.
Բայց անխոնջ ես, դու չես հոգնում
Տրակտորիստ, ջան արտավար:

Խոսք՝ Ս. Ջավայանի:
Յերաժշտ.՝ Մ. Այվազյանի

A II/39248

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

[0Տկ.]

А 392

12

ПЕСЕН КОЛХОЗНИКУ

Гиз ССР Армении, Эривань, 1935 г.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220039248

39248